ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 նոյեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

153
(3003)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԺ-Ն ՍԵՎ ԽԱՎԻԱՐ Է ԳՆԵԼ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

ՀՀ Ազգային ժողովի հյուրասիրությունները մեկ անձից են կազմակերպվում՝ առանց մրցույթի: Մի կարգ, որը օրերս խնդրահարույց համարեց նաեւ ՊՎԾ նախագահ Ռոմանոս Պետրոսյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը բաց աղբյուրներից տեղեկացավ, որ 2024 թվականի հունվարից մինչեւ հոկտեմբեր ամիսը Ազգային ժողովի կարիքների համար պաշտոնական պատվիրակությունների ընդունելության, հյուրասիրության ծառայությունների ձեռքբերման համար կնքվել են մի քանի պայմանագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է գրեթե 9 մլն դրամ:

Պայմանագրերը կնքվել են Ազգային ժողովի եւ «ԷՄ ԲԻ ՁԻ ԳՐՈՒՊ», «Դը Փաբլիք», «Բլիզարդ»,«Պաուլաներ», եւ «ՍԻՄՓԼ ԴԻԼ» ՍՊԸ-ների միջեւ:

Պայմանագրում առկա են ուշագրավ գնումներ. օրինակ՝ 20 գրամ սեւ ձկնկիթը՝ վերնագրված «պետության կարիքների համար»:

Թե երբ եւ ինչպես է «օգտագործվել» «Բլիզարդ» ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագրի արդյունքում մատակարարված սնունդը, մասնավորապես 20 գրամ ձկնկիթը, ԱԺ-ից հրաժարվել են պարզաբանելուց:

«ՀՀ Ազգային ժողովի 2024 թվականի կարիքների՝ պաշտոնական պատվիրակությունների ընդունման, հյուրասիրությունների կազմակերպման նպատակով ԱԺ-ի եւ «Բլիզարդ» ՍՊԸ-ի միջեւ կնքված պայմանագիրը հասանելի է գնումների կայքում»:

«Ժողովուրդ» օրաթերթի այն հարցմանը, թե որ պատվիրակության համար է կազմակերպվել գնումը, ԱԺ-ից եւս փաստացի հրաժարվել են պատասխանելուց՝ ուղղորդելով պաշտոնական կայք:

Գուցե ԱԺ աշխատակազմից տեղյակ չեն, որ բաց աղբյուրում դրված տեղեկությունը տեսնելով էինք հենց մանրամասներն իմանալու համար հարցում արել:

Դավիթ Երեմյանն այս կադրից հետո թիրախում է հայտնվել. հորդորում են բոյկոտել նրա բիզնեսները: Հայաստանի 1000 խոշոր հարկատուների ցանկի 141-րդ տողում տեղ գտած «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊ ընկերության դեմ արշավ է սկսվել: Համացանցում օգտատերերը հորդորում են «սեւ ցուցակ» գցել «Երեմյաններ» ընկերությանը եւ նրանց պատկանող ռեստորանները: Իսկ ի՞նչն է նման աղմուկի պատճառը: Բանն այն է, որ «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ի սեփականատեր Դավիթ Երեմյանն օրերս դարձյալ հանդիպում էր ունեցել վարչապետի տիկին Աննա Հակոբյանի հետ, խոնարհվելով բարեւել էր նրան, ինչը ֆիքսել են կադրերում: Հենց դրանից հետո սկսեցին հորդել բացասական մեկնաբանությունները եւ հրապարակումները: Օգտատերերից շատերը հրապարակումներ արեցին, որ չպետք է այլեւս այցելել Երեմյաններին պատկանող «Լավաշ», «Շերեփ», «Պանդոկ Երեւան», «Սիզնս» ռեստորաններ, եւ ընկերների ցանկից պետք է հեռացնեն Դավիթ Երեմյանին: Այս ամենի պատճառը իշխանությունների հետ մերձեցումն է, քանի որ Դավիթ Երեմյանը, կարծես, դարձել է իշխանության «կից գործարարը»: Նա գրեթե բաց չի թողնում ոչ մի իշխանական միջոցառում կամ դրամահավաք: Նա եզակիներից է, որ պետական եւ միջազգային ֆինանսավորմամբ ստեղծել է խելացի անասնագոմ: Դավիթ Երեմյանը միակն է, որ Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդից՝ ԱՆԻՖ-ից, ստացավ գյուղատնտեսությունը զարգացնելու համար ներդրում: Նա նաեւ էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանի հետ, որպես պատվիրակության անդամ, 2023 թվականին մեկնել էր Լոնդոն: Ի՞նչ է սա, եթե ոչ իշխանության «կցորդ օլիգարխի» վարքագիծ:

ՔՊ խմբակցության պատգամավորներ Հրաչ Հակոբյանը, Սիսակ Գաբրիելյանը, շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը եւ ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանը պատրաստվում են մեկնել Լոնդոն՝ ներկա լինելու Կոնֆերենցիաների լիգայի Լիգայի փուլի երրորդ տուր «Չելսի»-«Նոա» հանդիպմանը, որը նախատեսված է նոյեմբերի 7-ին՝ հինգշաբթի՝ Երեւանի ժամանակով 00:00-ին: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց նրանցից հետաքրքրվել՝ արդյոք սեփակա՞ն միջոցներով են մեկնելու Անգլիա՝ ֆուտբոլ դիտելու, թե՞ պետբյուջեի հաշվին: ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանի մամուլի խոսնակը, մեր հարցին ի պատասխան, հաստատեց, որ նախարարը ներկա է լինելու խաղին, սակայն ամեն բան կազմակերպում է սեփական միջոցներով: ՔՊ խմբակցության պատգամավորներ Հրաչ Հակոբյանն ու Սիսակ Գաբրիելյանը երեկ մեր զանգերին եւ նամակներին չպատասխանեցին: Նշենք, որ հատկապես Սիսակ Գաբրիելյանը, կարծես թե, ֆուտբոլի մեծ սիրահար է, նա հաճախ է գործուղվում այս կամ այն երկիր, երբ կարեւոր ֆուտբոլային հանդիպում է այդ երկրում կայանալու: Օրինակ այս ամռանը՝ հունիս ամսին, նա պատվիրակության կազմով գործուղվել էր Գերմանիա հենց այն ժամանակահատվածում, երբ այդ երկրում Եվրոպայի աշխարհի ֆուտբոլի առաջնությունն էր ընթանում: Աշխատանքային այցով Գերմանիա մեկնած Սիսակ Գաբրիելյանը նաեւ իր ժամանցն էր անցկացրել այնտեղ: Նա ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի, Գերմանիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վիկտոր Ենգիբարյանի հետ Գերմանիայի Լայպցիգ քաղաքի մարզադաշտում Եվրո-2024-ի խմբային մրցաշարի՝ Ֆրանսիա-Նիդեռլանդներ ֆուտբոլային հանդիպմանն էր նաեւ ներկա եղել:



ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանին, ՊՎԾ պետ Ռոմանոս Պետրոսյանին, ԱԺ պատգամավոր Գագիկ Մելքոնյանին, Ռուսաստանում Հայաստանի դեսպան Գուրգեն Արսենյանին կկանչեն դատարան: Դեռեւս փետրվարի 20-ից ՔՊ գրասենյակին, ինչպես նաեւ ՔՊ պատգամավորներ Գուրգեն Արսենյանին եւ Գագիկ Մելքոնյանին պատկանող տարածքներում ռումբ տեղադրելու գործով քրեական վարույթ կա նախաձեռնված ու գործը դատարանում է: ՀՀ քննչական կոմիտեն պարզել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներին, նրանց աջակիցներին ահաբեկելու համար 2024 թվականի փետրվարի 20-ին քաղաքացին գնացել է Երեւան քաղաքի Գյուլբենկյան 33 հասցեում գտնվող «Միավորված աշխատանքային կուսակցության» գրասենյակի մոտ եւ ժամը 03:50-ին գրասենյակից 9 մետր հեռավորության վրա գտնվող մայթեզրի ծառի տակ տեղադրել է նախապես պատրաստված, որպես պայթեցման միջոց շուրջ 1 կիլոգրամ տրոտիլ եւ պենտալիտ, ավերածություններ գործելու, մարդկանց կյանքից զրկելու, շրջակա շինություններն ամբողջությամբ ավերելու համար պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ԵՐԳԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՔԱՑԱԾ ՔԱՇՔՇՈՒԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իրավապահ համակարգի ներկայացուցիչները իջել են իրենց «բարձունքից» եւ գնացել Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի տուն ու օգոստոսի 26-ին տեղի ունեցած միջադեպի գործով պարզաբանումներ պահանջել:

Հիշեցնենք, որ Աշտարակ քաղաքում հայտնի «Նվոյին» պատկանող Wine Corner Ashtarak-ում քաշքշուկ էր տեղի ունեցել: Օգոստոսի 26-ին shamshyan.com-ը գրել էր, որ Hayat Project-ի համերգի ժամանակ, որին ներկա են եղել նաեւ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը, ներկա էր եղել նաեւ «օրենքով գողի» զարմիկը, որի հետ պաշտոնյան վիճաբանության մեջ էր մտել այն բանի համար, որ պատվիրել են երգ՝ «Вот такая доля воровская»-ն, ու մարզպետը ընդիմացել է՝ ասելով. «Ես այստեղ՝ դու ինչ-որ գողական ե՞րգ ես պատվիրում»:

Եվ ահա, իրավապահները նրանից հետաքրքրվել են, թե ինչ ծեծկռտուք է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան, որ մարզպետ Մովսիսյանը երդումներ է տվել, թե ընդամենը լեզվակռիվ է եղել, ծեծկռտուք չի եղել:

Մենք տեղեկացանք նաեւ, որ միջադեպի գործով 30-ից ավելի անձանց են այս օրերին տարել հարցաքննությունների՝ միջադեպի մանրամասները պարզելու համար:

ՀՀ քննչական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին, որ գործով քրեական վարույթը շարունակվում է:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ ԱԺ-ում Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանից հետաքրքրվել է «օրենքով գող»-ի որդու հետ կատարված միջադեպի մասին:

-Անդրադառնալով ամիսներ առաջ տեղի ունեցած աղմկահարույց մի միջադեպին՝ ցանկանում եմ ճշտել՝ այդ ի՞նչ տեղի ունեցավ: Արագածոտնի մարզպետը «գողականներ»-ի հետ ի՞նչ խնդիր ունի: Ռեստորանում «Вот такая доля воровская» երգը Ձեզ այդքան հունից հանե՞լ էր: Եղել եք այնտեղ եւ հայտնի «օրենքով գողի» տղայի հետ հարցուպատասխան եք ունեցել երաժշտության վերաբերյալ: Ցանկանում եմ Դուք պատմեք, թե ինչ էր տեղի ունեցել:

-Մեծ հաշվով այդքան էլ ասելիք չունեմ, քանի որ, որպես այդպիսին, այդքան մեծ դեպք չէր, որքան աղմուկը: Ավելի շատ աղմուկն է եղել, քանի որ որոշ լրատվամիջոցներ, իրական տեղեկություններ չունենալով, թե ինչ է եղել, տարածել էին նորություններ, որը չէր համապատասխանում իրականությանը:

-Դուք կպատմե՞ք, թե ինչ է տեղի ունեցել:

Առանձնապես ոչինչ տեղի չի ունեցել: Խնջույքի ժամանակ, որին բազմաթիվ մարդիկ են ներկա եղել, եղել է երաժշտություն, որը, իմ կարծիքով, այդ պահին հարմար չի եղել: Երաժշտությունը նույն վարկյանին փոխվել է եւ չի առաջացել որեւէ խնդիր:

-«Вот такая доля воровская»-ն վա՞տ երգ է:

-Չեմ կարող մեկնաբանել մի բանը, որը որ չի եղել: Ամեն բան սահմանափակվել է այդքանով, իսկ մնացածը որոշ մարդկանց վառ երեւակայության արդյունքն է:

-Իսկ Ձեզ քննչական կոմիտե հրավիրե՞լ են այդ հարցով:

Ոչ, ինչո՞ւ պիտի հրավիրեին: Առօրյա կյանքում այնքան այդպիսի դեպքեր են լինում: Եթե քննչական կոմիտեն զբաղվի նման հարցերով, ապա լուրջ հարցերով չի հասցնի զբաղվել: Իմ շուրջ նման շահարկումները ծիծաղելի են, քանի որ ամբողջ կյանքում կամ պետական համակարգում ենք եղել՝ եւ ես, եւ ընտանիքիս անդամները, կամ ձեռնարկատիրությամբ եմ զբաղվել:

-Իսկ միջադեպից հետո «գողականներ»-ը եկա՞ն քննարկելու: Ի վերջո ճաշակին ընկեր չկա, եւ յուրաքանչյուրը հանրային վայրում կարող է իր ճաշակով երաժշտություն պատվիրել եւ լսել:

-Ոչ մի հարց ու պատասխան չի եղել:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

«ՍԵՎ ՑՈՒՑԱԿ»-Ի ՊԱՏՃԱՌԸ

Հայաստանի Հանրապետությունը վերացրել է Եվրամիության ավիացիոն «սեւ ցուցակ»-ում հայտնվելու պատճառ դարձած 41 թերություններից 40-ը, իսկ վերջին թերության վերացումը նախատեսվում է ավարտին հասցնել ընթացիկ տարվա դեկտեմբերին:

ԱԺ հանձնաժողովների համատեղ նիստում 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական քննարկումների ժամանակ այս մասին ասաց Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը:

Նա նշեց, որ վերջին թերությունը վերաբերում է տեսուչների եւ մասնագետների պակասին:

«Պակասի մի մասը լրացվել է, իսկ եւս մի քանի մասնագետ այժմ վերապատրաստման փուլում են, որը կավարտվի դեկտեմբերի կեսերին»,- ասաց նա:

Նախարարն ընդգծեց, որ Հայաստանը հոկտեմբեր ամսին արդեն դիմել է Եվրամիության ավիացիոն գործընկերներին՝ սկսելու այն աշխատանքային պլանը, որով Հայաստանի ավիացիան դուրս կգա «սեւ ցուցակից»: Նա տեղեկացրեց, որ նոյեմբերի 13-ին նախատեսված է տեսակապով խորհրդակցություն եվրոպական գործընկերների հետ, որի ընթացքում կձեւավորվի ճանապարհային քարտեզը, որպեսզի Հայաստանի՝ «սեւ ցուցակից» դուրս գալու գործընթացն ավարտին հասցվի:

«Շատ հույս ունեմ, որ մենք խնդիրները վերացրել ենք՝ հաշվի առնելով նաեւ այն, որ այս տարի Հայաստանում անց է կացվել ԻԿԱՕ-ի (Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն) աուդիտը, որը բարձր վարկանիշ ունեցող միջազգային մարմին է: Աուդիտի արդյունքները ցույց տվեցին, որ մենք բազմաթիվ թերություններ վերացրել ենք»,- հավելեց նա:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԽՔ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Ադրբեջանի Անվտանգության խորհրդի քարտուղար Ռամիլ Ուսուբովն ասել է, որ մի շարք արտաքին ուժեր փորձում են «օգտագործել» Հայաստանը՝ տարածաշրջանում սպառնալիքներ ստեղծելու համար:

«Ադրբեջանը՝ որպես հաղթանակած երկիր եւ տարածաշրջանի ռազմական ուժի կենտրոն, կարող է Հայաստանին «ստիպել» խաղաղության պայմանագիր կնքել՝ հիմնված միջազգային իրավունքի վրա», - ասել է ադրբեջանցի պաշտոնյան:

Ուսուբովի խոսքով՝ Ադրբեջանն ի վիճակի է կասեցնել ցանկացած ճնշում, այդ թվում՝ «ռեւանշիստական գործողությունները»:

«Խաղաղության պայմանագրի ստորագրումը հնարավոր է, եթե Հայաստանը հրաժարվի արտաքին ազդեցությունից եւ իր ժողովրդի շահերից բխող որոշումներ կայացնի», - ասել է նա:

ՀՀ ՀԱՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի նոյեմբերի 12-ին, Արդարադատության միջազգային դատարանը կհրապարակի Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի գործով (Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառման վերաբերյալ) Բաքվի ներկայացրած նախնական առարկությունների մասով վճիռը:

Հրապարակային նիստը կանցկացվի ժամը 15:00-ին (Երեւանի ժամանակով 18:00-ին) Հաագայի Խաղաղության պալատում, որի ընթացքում Դատարանի նախագահ, դատավոր Նավաֆ Սալամը կկարդա Դատարանի վճիռը:

Հիշեցնենք, որ 2021 թվականի սեպտեմբերի 16-ին Հայաստանը վարույթ նախաձեռնեց Ադրբեջանի դեմ՝ կապված «Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի ենթադրյալ խախտումների հետ:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՑ

ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Պարույր Հովհաննիսյանը հաստատում է՝ Բելգիայում ՀՀ դեսպան Տիգրան Բալայանը սպառնալիքներ է ստացել Ադրբեջանի դեսպանից:

«Մեզ հասած տեղեկություններով ընդունելության ընթացքում վիրավորանքներ ու սպառնալիքներ են հնչել, որի վերաբերյալ հայտնել ենք բելգիական կողմին հայտագրով, ինչպես նաեւ Եվրամիությանը: Եվ այդ հարցով հետաքննում է տեղի ունենում»,- ասել է Հովհաննիսյանը:

Հիշեցնենք, որ հայտնել էինք, Հայաստանի դեսպանությունը պաշտոնական բողոք էր հայտնել Բրյուսելում այլ դիվանագիտական ներկայացուցչություններին այն բանից հետո, երբ ՀՀ դեսպան Տիգրան Բալայանը հայտարարել է, որ ադրբեջանցի դեսպան Վագիֆ Սադիգովը սպառնացել էր սպանել իրեն: Այս մասին գրում էր politico.eu-ն:

Սա առաջին միջոցառումն էր, որին Հայաստանի դեսպանատունը հրավիրվել էր Անկարայի աջակցությամբ՝ 2020թ. պատերազմից հետո:

ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆԸ՝ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Սրբուհի Գալյանը նշանակվել է ՀՀ արդարադատության նախարար. նախագահ Վահագն Խաչատուրյանը ստորագրել է համապատասխան հրամանագիրը:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 131-րդ հոդվածի, ինչպես նաեւ «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի. Սրբուհի Գալյանին նշանակել արդարադատության նախարար»,- ասված է հրամանագրում:

Հիշեցնենք, որ Գալյանն ավելի վաղ զբաղեցնում էր ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնը եւ համակարգում էր ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը: Նոյեմբերի 4-ից նա ազատվել է զբաղեցրած պաշտոնից այն բանից հետո, երբ ՔՊ վարչությունում որոշում է կայացվել նախարարի պաշտոնում առաջադրել Գալյանի թեկնածությունը:

ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆԻՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԿԱՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գյումրու ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը նոյեմբերի 8-ին նիստ է նախաձեռնելու:

Օրակարգում համայնքապետի ընտրության հարցն է լինելու: Եթե ավագանին 2 անգամ արտահերթ նիստով համայնքապետ չընտրի, ապա ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվելու:

Հիշեցնենք, որ ՔՊ-ի համայնքապետի թեկնածուն պատգամավոր Կարեն Սարուխանյանն է:

Հավելենք, որ հոկտեմբերի 28-ին Գյումրու քաղաքապետ Վարդգես Սամսոնյանը հրաժարական է տվել ու մինչ օրս նրա պաշտոնը թափուր է մնացել:

200 ՄԼՆ ԵՎՐՈ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Գերմանիան Ուկրաինային լրացուցիչ 200 մլն եվրո օգնություն կտրամադրի ձմռանը ընդառաջ:

Ինչպես փոխանցում է ՏԱՍՍ-ը, այս մասին Կիեւ կատարած այցի ժամանակ հայտարարել է Գերմանիայի արտգործնախարար Անալենա Բերբոքը:

Նշվում է, որ լրացուցիչ մարդասիրական օգնությունը վերաբերում է ձմռան շրջանում բնակչությանը շտապ օգնություն ցուցաբերելու միջոցառումներին:

Գերմանիայի ԱԳ նախարարը մանրամասնել է, որ այդ միջոցները կուղղվեն իրենց կողմից հատկացված շտապ մարդասիրական օգնության ավելացմանը, որպեսզի մարտական գործողությունների առաջնագծին մոտ գտնվող տները, որոնք չունեն էներգամատակարարման հնարավորություն, կարողանան վառելիք ստանալ:

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄ

Հունգարիայի խորհրդարանը ճնշող մեծամասնությամբ երկրում արտակարգ դրությունը երկարաձգել է եւս կես տարով՝ մինչեւ մայիսի 18-ը՝ կապված հարեւան Ուկրաինայում զինված հակամարտության հետ:

Օրենսդիր մարմնի կայքում հեռարձակված քվեարկության ժամանակ 199 պատգամավորից 130-ը կողմ է արտահայտվել համապատասխան օրինագծին, իսկ 49-ը՝դեմ:

Արտակարգ դրությունը թույլ է տալիս վարչապետին եւ կառավարությանը որոշ որոշումներ կայացնել արագացված կարգով:

ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ՔՎԵԱՐԿԵԼ Է 82,7 ՄԼՆ ՄԱՐԴ

ԱՄՆ մոտ 83 մլն քաղաքացի ժամկետից շուտ քվեարկել է ընտրություններում, որոնք տեղի են ունենում նոյեմբերի 5-ին: Այս մասին վկայում են Ֆլորիդայի համալսարանի հրապարակած տվյալները:

Նրա փորձագետների հաշվարկների համաձայն՝ ժամկետից շուտ քվեարկել է 82 713 594 բնակիչ: Նրանցից մոտ 45 մլն-ը քվեարկել է անձամբ ընտրատեղամասերում, մոտ 37,7 մլն մարդ՝ փոստով: Նշվել է, որ ժամկետից շուտ քվեարկությանը մասնակցածների 37,8 տոկոսը Դեմոկրատական կուսակցության, 35,8 տոկոսը՝ Հանրապետական կուսակցության անդամներ են: Եվս 26,4 տոկոսը կուսակցական պատկանելությունը չի նշել: Ժամկետից շուտ քվեարկած նահանգների ցուցակը գլխավորել է Տեխասը (8,9 մլն): Առաջին եռյակում են Ֆլորիդան (8,3 մլն) եւ Կալիֆոռնիան (8,1 մլն): ԱՄՆ-ում գրանցված ընտրողների թիվը կազմում է մոտ 168 մլն:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

Ո՞Վ Է ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ 50,000 ԴՈԼԱՐ ՀԱՆԳԱՆԱԿԱԾ Գ. ՉԵՄԲԵՐՋՅԱՆԸ

Հոկտեմբերի 31-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի՝ «Հաջողակից՝ սկսնակին» ծրագրի շրջանակում կազմակերպած «Երիտասարդի երազանք» նախագծի բարեգործական ընթրիին մասնակցել է 62 հաջողակ տղամարդ գործարար, ինչի արդյունքում «Իմ Քայլը» հիմնադրամը հավաքել է 62 մլն դրամ: Հայտնում են «Իմ քայլը» հիմնադրամից:

Ուսումնասիրելով, թե ովքեր են «Իմ քայլը» հիմնադրամի նվիրատուները՝«Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքիր փաստեր է արձանագրում:

Այսպիսով՝ «Իմ քայլը» հիմնադրամի երեկույթին մասնակցել է Գաբրիել Չեմբերջյանը, որը, հավանաբար, 2019 թվականին եւս մասնակցել է դրամահավաքին, որի ընթացքում նվիրատվության չափը սկսվել է 1000 դրամից, ոչ թե մեկ միլիոնից:

Ըստ շրջանառվող լուրերի՝ այդ ժամանակ նա հանգանակել էր 25 հազար ԱՄՆ դոլար: Հարկ է նշել, որ Գաբրիել Չեմբերջյանը «Փյունիկ» բարեգործական հիմնադիր-նախագահ Գաբրիել Ջեմբերջին է:

Տարածված տեղեկությունների համաձայն՝ «Իմ քայլը» հիմնադրամի վերջին դրամահավաքին Չեմբերջյանը նվիրաբերել է 50 հազար դոլար:

«ՋԼՋ Պրոյեկտ Քոմփանի»-ն հիմնադրվել է 2010 թվականի հուլիսի 20-ին, որի 40 տոկոս բաժնետերը, ըստ լուրերի, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամն է:

2018 թվականին «ՋԼՋ Պրոյեկտ Քոմփանի»-ի մյուս՝ 20 տոկոսի, սեփականատերը «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի մեկ այլ անդամ է, ըստ տեղեկությունների, ընկերության մնացած 20 տոկոսը պատկանում է Լիլիթ Բագրատյանին, ով ընկերության հիմնադիր Գոռ Առաքելյանի մայրն է: ՊԵԿ-ի քննչական վարչության քննիչների եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցները 10 հասցեներում, այդ թվում՝ «ՋԼՋ Պրոյեկտ Քոմփանի» ընկերության հիմնադիրների բնակարաններում եւ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի գրասենյակում կատարել է խուզարկություններ, որից արդյունքների մասին, համաձայն «Հետք»-ի հրապարակման, կոմիտեից տվյալներ չեն հաղորդել: Համաձայն մամուլի հրապարակումների՝ Գաբրիել Չեմբերջյանի մասնակցությամբ ընկերությունը 300 մլն դրամի վնաս է պատճառել պետությանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գաբրիել Չեմբերջյանը ժամանակի թելադրանքի մարդ է, երբ անհրաժեշտ է՝ հիշխանության հետ է լավ, երբ անհրաժեշտ՝ ընդդիմության հետ: Իսկ Աննա Հակոբյանի կազմակերպած երեկույթին մասնակցելը, կարելի է եզրակացնել, որ մեկ նպատակ ուներ՝ կարճել քրեական գործերը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄ

ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի Կենտրոնական Գրասենյակը հայտարարություն է տարածել, որում ասվում է. «Վերջին շրջանում Հայ դատի Եվրոպայի գրասենյակը Եվրոպական խորհրդարանի պատգամավորների շրջանում ծավալուն աշխատանքներ է իրականացրել, որոնք COP 29-ին ընդառաջ, միտված էին բարձրացնելու նրանց իրազեկվածությունը Ադրբեջանում մարդու իրավունքների եւ բնապահպանական խնդիրների վերաբերյալ: Կատարված աշխատանքների արդյունքում Եվրոպական խորհրդարանի թվով 52 պատգամավորներ ստորագրել են հայտարարություն, որով Ադրբեջանին կոչ են անում անհապաղ ազատ արձակել հայ ռազմագերիներին, երաշխավորել Արցախի մշակութային ժառանգության պաշտպանությունը, ադրբեջանական զինուժը դուրս բերել ՀՀ օկուպացված տարածքներից:

Հայտարարությունը ստորագրած պատգամավորները ներկայացնում են Եվրոպական խորհրդարանի հիմնական քաղաքական խմբերը, կան նաեւ անկախ պատգամավորներ:

Եվրոպական խորհրդարանի պատգամավորների կողմից ընդունված հայտարարության առթիվ ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը նկատել է.

«Եվրոպական խորհրդարանի անդամների այս կոչը հստակ ազդանշան է՝ուղղված թե՛ Ադրբեջանին, թե՛ ԵՄ ղեկավարությանը COP29-ից անմիջապես առաջ: Հայ դատի Եվրոպայի գրասենյակը շարունակաբար աշխատում է խորհրդարանի անդամների հետ՝ հայտարարության մեջ ընդգրկված հարցերի վերաբերյալ, եւ մենք երախտապարտ ենք նրանց, ինչպես նաեւ Եվրոպական խորհրդարանին առհասարակ՝ արդարության ձայնը լինելու համար: Ավելորդ է ասել, որ Հայ դատի գրասենյակը, որպես եվրոպական համայնքային կազմակերպություն, կշարունակի աշխատել, որպեսզի հաշվետվողականության եւ ազդեցիկ քայլերի մղի ԵՄ գործադիր իշխանություններին:

Ստորեւ ներկայացնում ենք հայտարարության հայերեն թարգմանությունն ամբողջությամբ:

Հայտարարություն Բաքվում կայանալիք COP 29-ին ընդառաջ

2024 թ. նոյեմբերին Ադրբեջանում կայանալիք COP29 համաժողովին ընդառաջ մենք ցանկանում ենք ընդգծել, որ բացի կլիմայի վերաբերյալ ազդեցիկ եւ նշանակալից համաժողով լինելուց, այն նաեւ իր մեջ ներառում է հավատարմություն արդարության եւ մարդկային արժանապատվության սկզբունքներին: Ուստի ընդունող երկրի, այս դեպքում՝ Ադրբեջանի համար պետք է առաջնահերթ նշանակություն լինի հավատարմությունն այս սկզբունքներին:

Համաձայն Եվրոպական խորհրդարանի կողմից 2021 թ. մայիսից ընդունված համապատասխան բանաձեւերի եւ զեկույցների՝ մենք Ադրբեջանի կառավարությանը կոչ ենք անում.

- անհապաղ եւ անվերապահորեն ազատ արձակել Բաքվում պահվող բոլոր հայ ռազմագերիներին, պատանդներին եւ գերիներին, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի ռազմաքաղաքական ղեկավարությանը
- Ապահովել, որ Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային եւ կրոնական ժառանգությունը, ներառյալ վանքերը, խաչքարերը, մնան անձեռնմխելի եւ զերծ «ալբանացումից», ինչպես նաեւ պատմության վերախմբագրումից
- ձեռնպահ մնալ Հայաստանի Հանրապետության դեմ սպառնալիքներից եւ ցանկացած ագրեսիայից, դուրս բերել ադրբեջանական զինուժը Հայաստանի Հանրապետության օկուպացված տարածքներից:

Ավելին՝ մենք ԵՄ խորհրդին, Հանձնաժողովին, ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցչին կոչ ենք անում հաշվի առնել Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված վերոհիշյալ բանաձեւերն եւ գործել դրանց ոգուն համապատասխան»:

ՊՈՒՏԻՆԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՅԼԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ռուսաստանն ամեն ինչ անում է Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների կարգավորման եւ Երեւանի ու Բաքվի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրման համար», - հավատարմագրերի հանձնման արարողության ժամանակ հայտարարել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը:

«Նույն ոգով է կառուցվում մեր համագործակցությունը Հայաստանի եւ Ադրբեջանի հետ: Մենք արել եւ անում ենք ամեն ինչ ադրբեջանա-հայկական հարաբերությունների կարգավորման, Անդրկովկասում կայուն խաղաղություն ապահովելու համար: Այսուհետ եւս կաջակցենք խաղաղության պայմանագրի կնքման, պետական սահմանի սահմանազատման եւ տնտեսական ու տրանսպորտային կապերի ապաշրջափակման աշխատանքներին՝ 2020-2022 թվականների բարձր մակարդակի հայտնի եռակողմ պայմանավորվածությունների հունով», - ասել է Կրեմլի ղեկավարը:

ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԻՑ ՆԵՏԵԼ ԷԻՆ ՀՀ ՏԱՐԱԾՔ

ԲՆԱԿՉԻ ՄԵՔԵՆԱՅՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է 3,5 ԿԳ ԹՄՐԱՄԻՋՈՑ

ՀՀ ֆինչական կոմիտեի Վայոց ձորի մարզային ֆինչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ԱԱԾ Սյունիքի մարզային վարչության աշխատակիցների հետ համատեղ իրականացված միջոցառումների արդյունքում պարզվել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքի՝ ֆինության համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ հանցավոր շղթայում ներգրավված անձանցից երկուսի ինքնությունը:

Քննությամբ, մասնավորապես, պարզվել է, որ Վայոց ձորի մարզի 62-ամյա բնակիչը 2024 թվականի հոկտեմբերի 29-ին՝ժամը 06:30-ի սահմաններում, իր կողմից վարվող «HONDA ACCORD» մակնիշի ավտոմեքենայով հայ-իրանական սահմանի մոտից վերցրել է ԻԻՀ կողմից փշալարային ցանցի վրայով ՀՀ տարածք նետված 4 փաթեթ «Մարիխուանա» եւ 10.55 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցներ, որոնք պահել է իր կողմից վարվող ավտոմեքենայի բեռնախցիկում եւ ապօրինի իրացնելու նպատակով տեղափոխել:

Կատարված բազմաթիվ քննչական գործողությունների, ինչպես նաեւ ՀՀ ազգային անվտանգության ծառայության Սյունիքի մարզային վարչության աշխատակիցների հետ համատեղ ձեռնարկված միջոցառումների արդյունքում նույն օրը՝ ժամը 13:30-ին, Վայոց ձորի մարզի նշված բնակիչը, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով, ձերբակալվել է, իսկ առանձնապես խոշոր չափերով վերը նշված թմրամիջոցներով փաթեթները տրանսպորտային միջոցի խուզարկությամբ հայտնաբերվել եւ վերցվել են:

Պարզվել է, որ տղամարդը հիշյալ թմրամիջոցները պետք է տեղադրեր դրանք փշալարի վրայով ՀՀ տարածք նետած, քննությամբ դեռեւս չպարզված անձի՝ ԻԻՀ քաղաքացու կողմից նախընտրած թաքստոցում՝ այլ անձի կողմից այն ձեռքբերելու եւ գնորդին փոխանցելու նպատակով:

62-ամյա տղամարդուն պատկանող «HONDA ACCORD» մակնիշի ավտոմեքենայում օրենքով սահմանված կարգով կատարված խուզարկության ժամանակ բեռնախցիկից հայտնաբերվել է 4 փաթեթ՝1,130 կգ, 1,120 կգ, 1,065 կգ եւ 0,505 կգ ընդհանուր քաշերով: Տղամարդը իրավապահներին հայտնել է, որ հայտնաբերվածը «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց է, որոնք իրեն է փոխանցել ԻԻՀ մի քաղաքացի, եւ նշված փաթեթներն ինքը պետք է տեղափոխեր նրա նախընտրած վայր:

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային վարչության եւ ԱԱԾ Սյունիքի մարզային վարչության աշխատակիցների հետ համատեղ իրականացված միջոցառումների արդյունքում պարզվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության շղթայում ներգրավված եւս մեկ անձի ինքնությունը, ով ԻԻՀ 23-ամյա քաղաքացի է:

Վերջինս, իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում նախապես փոխարինված հիշյալ փաթեթները ձեռք բերելու պահին, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, ՀՀ ԱԱԾ Սյունիքի մարզային վարչության ծառայողների կողմից ձերբակալվել է, ինչի հետեւանքով, իր կամքից անկախ հանգամանքներում, չի կարողացել հանցանքն ավարտին հասցնել:

Նախաքննության ընթացքում նշանակվել է դատանյութագիտական եւ դատաքիմիական փորձաքննություն՝ փաթեթներում առկա զանգվածների բնույթը, հստակ քաշը պարզելու նպատակով:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա 23-ամյա երիտասարդի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշում է կայացվել, իսկ Վայոց ձորի բնակչի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Միջնորդություններ են ներկայացվել՝ հիշյալ երկու անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որոնք դատարանի կողմից բավարարվել են:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ թմրամիջոցների շղթայում այլ անձանց ներգրավվածությունը պարզելու ուղղությամբ:

ՀՀ քննչական կոմիտե

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՂՐԱՇԵՆՈՒՄ. ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի եւ Անիի քննչական բաժնում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացվում են քննչական եւ վարութային գործողություններ՝ նոյեմբերի 2-ին Շիրակի մարզի Մեղրաշեն բնակավայրի 30-ամյա բնակչի սպանության բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

2024թ. նոյեմբերի 2-ին հաղորդում է ստացվել այն մասին, որ Մեղրաշեն գյուղից «Արթիկ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն է տեղափոխվել նույն բնակավայրի 30.ամյա բնակչի դին՝ «կրծքավանդակի ձախ կեսի կտրածական վերք, կենսաբանական մահ» ախտորոշմամբ:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քրեական վարույթով կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում վերցվել են տեսանկարահանող սարքի տեսագրություններ, նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ, կատարվել առգրավումներ:

Նախաքննությունը շարունակվում է:

ԲԴԽ–Ն ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ԵՐԿՈՒ ԴԱՏԱՎՈՐԻ

ԲԴԽ-ն բավարարել է արդարադատության նախարարի՝Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Ռազմիկ Մարիկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը եւ նրան հայտարարել է նկատողություն: ԲԴԽ անդամներ Էդգար Հովհաննիսյանն ու Արթուր Աթաբեկյանը դեմ են քվեարկել որոշմանն ու հատուկ կարծիք ներկայացրել:

ԲԴԽ-ն նկատողություն է հայտնել նաեւ վերաքննիչ դատարանի դատավոր Լեւոն Գրիգորյանին. այս կապակցությամբ եւս նախարարությունը միջնորդություն էր ներկայացրել:

Քննելով արդարադատության նախկին նախարար Գրիգոր Մինասյանի միջնորդությունը՝դատավոր Լեւոն Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, խորհուրդը որոշել է այն բավարարել եւ դատավորին հայտարարել նկատողություն:

Խորհուրդն ընդգծել է՝ դատավորն օրինական ուժի մեջ մտած վճռի կայացումից 8 տարի անց դրա դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց պատշաճ հիմնավորման եւ պատճառաբանման, վարույթ ընդունելով եւ վճիռը բեկանելով թույլ է տվել իրավական որոշակիության սկզբունքի, ինչպես նաեւ անձի արդար դատաքննության իրավունքի եւ սեփականության իրավունքի խախտումներ:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՂԲՈՐՈՐԴԻՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ

ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի եղբորորդին՝Նարեկ Սարգսյանը, ՔԿՀ-ից ազատ արձակվեց պատժի կրումից հետո:

Տեղեկությունը երեկ հաստատել է ՔԿԾ հանրային կապերի բաժնի պետ Նոնա Նավիկյանը:

ՔՊ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՀԱՐՑԱՔՆՆԵԼ ԵՆ

Դեռեւս փետրվարի 20-ից ՔՊ գրասենյակին, ինչպես նաեւ ՔՊ պատգամավորներ Գուրգեն Արսենյանին եւ Գագիկ Մելքոնյանին պատկանող տարածքներում ռումբ տեղադրելու գործով քրեական վարույթ կա նախաձեռնված ու գործը դատարանում է:

ՀՀ քննչական կոմիտեն պարզել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներին, նրանց աջակիցներին ահաբեկելու համար 2024 թվականի փետրվարի 20-ին քաղաքացին գնացել է Երեւան քաղաքի Գյուլբենկյան 33 հասցեում գտնվող «Միավորված աշխատանքային կուսակցության» գրասենյակի մոտ եւ ժամը 03:50-ին գրասենյակից 9 մետր հեռավորության վրա գտնվող մայթեզրի ծառի տակ տեղադրել է նախապես պատրաստված, որպես պայթեցման միջոց շուրջ 1 կիլոգրամ տրոտիլ եւ պենտալիտ, ավերածություններ գործելու, մարդկանց կյանքից զրկելու, շրջակա շինություններն ամբողջությամբ ավերելու համար պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը:

Ապա նույն ժամանակահատվածում պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը տեղադրել են Գյուլբենկյան 30/3 հասցեում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարածքային գրասենյակի մուտքի մոտ՝ այդ կերպ առաջացնելով պայթյունի եւ հրկիզման իրական սպառնալիք. սակայն Վ. Հ.-ի կողմից տեղադրված պայթեցման սարքերը չեն պայթել՝ ինքնաշեն պայթեցման սարքերի գործարկման մեխանիզմի հաշվարկված եղանակով չգործելու պատճառով:

Եվ ահա, այս գործի շրջանակում հարցաքննվել է Արաբկիրի՝ ՔՊ գրասենյակի քարտուղար Հասմիկ Փեթակչյանը ու մանրամասն պատմել, թե ինչ է կատարվել:

Մանրամասնրեը՝ArmLur.am կայքում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵՔԵՆԱ Է ՎԱՐԵԼ ՈՉ ՍԹԱՓ ՎԻՃԱԿՈՒՄ

Կոտայքի մարզի պարեկները նոյեմբերի 1-ին Աբովյան քաղաքի Արզնիի խճուղում ծառայություն իրականացնելիս նկատել են, որ «Ֆորդի» վարորդը մեքենան վարում է անվտանգության ամրագոտին չամրակապած: Մեքենան կանգնեցնելուց հետո պարեկները կասկածել ենլ, որ վարորդը ոչ սթափ վիճակում է: Աբովյան քաղաքի բնակիչ 27-ամյա վարորդը անմիջականորեն ծագած կասկածի հիմքով ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Կոտայքի բաժին: Խուզարկությամբ նրա պայուսակում հայտնաբերվել են նռնակի նմանվող առարկա, 16 հաբ եւ ծալովի դանակ: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Աբովյանի քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 4-ից 5-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 80 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՔՆՆԻՉԸ՝ ՏՆԱԿԱՆ ՕՂՈՒ ՓՈՐՁԱԳԵ՞Տ

Իրավապահների կողմից բացահայտվել է բնակարանային գողություններ կատարած 8 հոգանոց խումբ, որի անդամները Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի բնակիչներ են: Խմբի գողություններից տուժածների թվում են Հաղարծինումապրող ամուսիններ Գեղամ Գուլինյանը եւ Լիանա Ղազինյանը: 2023 թվականի նոյեմբերի 13-15-ը Հաղարծին գյուղի ծայրամասում գտնվող նրանց նորակառույց առանձնատնից գողացել են օղի թորելու սարք, փչացրել են մեկ անգամ քաշած, մեծ քանակությամբ խնձորի օղի, վնասել են առանձնատան պատուհանները, դռները: Պատճառված վնասը փաստացի կազմում է 1,3-1,5 միլիոն դրամ , սակայն քրեական գործի նյութերով վնասը գնահատված է ընդամենը 700 հազար դրամ: Տուժած ամուսինները հանցագործությունը բացահայտելու համար գոհ են ոստիկանության Դիլիջանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի կատարած աշխատանքից, սակայն դժգոհ են գործը քննող, քննչական կոմիտեի Դիլիջանի քննչական բաժնի քննիչ Արմեն Ավետիսյանից, ով, իրեն տնական օղու փորձագետի տեղ դրած, գողերի կողմից վնասված օղու գինը քիչ է հաշվել: Չնայած կատարվածը թեթեւ հանցագործություն չէ՝ խմբի կողմից բնակարան կամ շինություն մուտք գործելը, գողություն կատարելը, սակայն խմբի 8 անդամներից միայն մեկի նկատմամբ է որպես խափանման միջոց կալանքը ընտրվել, մյուսների հանդեպ տնային կալանք է կիրառվել: Գեղամ Գուլինյանը եւ Լիանա Ղազինյանը նշում են, որ դատարանի որոշմամբ տնային կալանքի տակ գտնվողները Հաղարծին գյուղում ազատ տեղաշարժվում են, ո՞վ պետք է հսկի նրանց տնային կալանքի տակ գտնվելը.... Պրոբացիայի ծառայությո՞ւնը, ինչո՞ւ չի վերահսկում: Խմբի անդամներից մեկը Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի համագյուղացի, նրա մտերիմ ընկեր, Դիլիջան համայնքի ավագանու ՔՊ խմբակցության անդամ Վարդան Թամրազյանի որդին է՝ Սամվել Թամրազյանը: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքից տեղեկանում ենք, որ այս տարվա սեպտեմբերի 13-ին Վարդան Թամրազյանի լիազորությունները վաղաժամ դադարեցվել են: Գեղամ Գուլինյանը, Լիանա Ղազինյանը չգիտեն, թե քրեական գործով նախաքննությունն ավարտվե՞լ է, ե՞րբ է կայանալու սույն գործով դատավարությունը:

29 ԱՄԻՍ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում շարունակվում է հայտնի գործարար, կուսակցական գործիչ Խաչատուր Քոքոբելյանի հոր՝ Գրիշա Քոքոբելյանին ՀՅԴ անդամ Սուրեն Մանուկյանի եւ մյուսների կողմից առեւանգելու գործով դատավարությունը: Դատարանը որոշել է եւս 3 ամսով երկարաձգել մեղադրյալների, այդ թվում՝ Սուրեն Մանուկյանի խափանման միջոց կալանքը, այն երկարաձգել մինչեւ 2025 թ. փետրվարի 11-ը: Միաժամանակ դատարանն արգելել է այլ անձանց շփումը Սուրեն Մանուկյանի հետ, բացառությամբ՝ ազգականների ու փաստաբանների: Ս. Մանուկյանը մինչ այդ կալանքի տակ էր 26 ամիս, դրան գումարվեց եւս 3 ամիս:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՆՉՈՒ ԵՆ ԴԺԳՈՀ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՍՈՂՈՒՆՆԵՐ ՈՒ ՄԻՋԱՏՆԵՐ ԵՆ ՄՏՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը տեւական ժամանակ է ինչ ահազանգեր է ստանում այն մասին, որ բազմաբնակարան շենքերի բնակարաններում միջատներ են լցվում պատուհաններից, իսկ ավելի կոնկրետ՝ մորեխներ, զատիկներ եւ խավարասերներ:

Բանն այն է, որ մորեխները լցվում են ոչ միայն առաջին կամ երկրորդ հարկեր, այլեւ հինգերորդ, վեցերորդ եւ այլ բարձր հարկեր, չնայած նրան, որ արդեն եղանակը ցրտել է:

«Ժողովուրդ» օրաթերթին ահազանգած քաղաքացիների խոսքով՝ խնդիրը առկա է գրեթե մեկ ամիս:

Նշենք, որ միջատների առկայությունը բազմաբնակարան շենքերի բնակարաններում հիմնականում նկատվում է Կենտրոն վարչական շրջանում, եւ, հատկապես, Արաբկիրում, Մալաթիա-Սեբաստիայում, Աջափնյակում:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցի վերաբերյալ փորձեց կապ հաստատել «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պաշտպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանի հետ՝ պարզելու՝ ինչի՞ հետեւանքով են շատացել միջատները եւ ի՞նչ է արվում խնդրին լուծում տալու համար:

«Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պաշտպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեց, որ վնասատու միջատները հիմնականում այն ծառերի վրա են լինում, որոնք նորերով չեն փոխարինվել: Խոսքը թեղիների մասին է, որոնք, ըստ Բեգոյանի, կենսունակությանը մոտ են, քանի որ սովորաբար թեղիների երկարակեցությունը 40-45 տարի է, իսկ Երեւանում առկա թեղիները 70 տարվա պատմություն ունեն:

«Հիմնականում ծառերը, որոնց վրա վնասատուները շատ են եւ ձմեռում, բարգավաճում են. դրանք հիմնականում Երեւան քաղաքում թեղի ծառատեսակներն են: Մենք փորձում ենք կենսունակությունը կորցրած ծառերը փոխարինել: Ծառերը, որ փոխարինվել են փողոցներում, այն ծառերն են եղել, որոնք կենսունակության ավարտին մոտ են եղել կամ ավարտել են կենսունակությունը, հետեւաբար, ինչքան ուզում է՝ սրսկենք, կենսունակությունը կորցրած ծառը չի «պայքարի»: Եթե մարդը 100 տարուց ավելի է կենդանի է, ինչքան ուզում է դեղ տանք, պետք է մի փոքր էլ ինքը պայքարի, որ վատ իրավիճակից դուրս գա: Նույնն էլ բնության մեջ է: Ծառերը, իհարկե, սրսկվում են վնասատուների դեմ, բայց մնացած ծառերը սրսկելուց հետո իրենք էլ են պայքարում վնասատուների դեմ, իսկ կենսունակության ավարտին մոտ գտնվող ծառերը չեն կարողանում պայքարել, եւ սրսկումից մոտավորապես 10-15 օր հետո նորից այդ կենդանական աշխարհը տարածվում է ծառի վրա», - «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պաշտպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը:

Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ, մի կողմից, Երեւանի հնաբնակ ծառերը կտրելով՝ օգուտ է լինելու՝ վնասատուներին հնարավոր է վերացնել, իսկ մյուս կողմից վնաս՝ ամառվա տապին պաշտպանվելու միջոց չենք ունենա, կառաջանա թթվածնի պակաս:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը երեկ Հյուսիսային պողոտայում էր. որտեղ նախապատրաստական աշխատանքներ են ընթանում «Առավելագույնը՝ 100 դրամ» նախաձեռնության հետ կապված: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը նախաձեռնել է ստորագրահավաք՝ հունվարի մեկից տրանսպորտային համակարգում սպասվող թանկացումների դեմ:

«Սիրելի երեւանցիներ, սկսում ենք ստորագրահավաք՝ հունվարի 1-ից նախատեսված տրանսպորտի թանկացման դեմ: ՔՊ-ական իշխանությունը ոչ միայն չի կարողանում նորմալ կազմակերպել էլեկտրոնային վճարման համակարգին անցումը՝ քաոս եւ անհարմարություններ ստեղծելով մեր քաղաքացիների համար, այլեւ մտադիր է հունվարի 1-ից լրջորեն թանկացնել տրանսպորտը»,- իր հայտարարության մեջ նշել է Հայկ Մարությանը:

Նշենք, որերեկվանից մեկնարկել է Հայկ Մարությանի՝ «Առավելագույնը՝ 100 դրամ» նախաձեռնությունը:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՎԱՐԿ՝ ԼՂ-ԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ

Գալիք տարվա պետական բյուջեի նախագծով Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման ծրագրով ձեռք բերված բնակարանների եւ բնակելի տների հիպոթեքային վարկերի գծով առաջացող պարտավորությունները սպասարկելու համար նախատեսված է 7,1 միլիարդ դրամ:

Այս մասին ասաց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը՝ ԱԺ հանձնաժողովների համատեղ նիստում 2025թ պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական քննարկումներին:

«Տեղեկացնեմ, որ 2024 թվականի հոկտեմբերի դրությամբ ծրագրով արդեն իսկ իր սեփական տունն է ձեռք բերել 3338 ընտանիք, իսկ եւս 600-ը ստացել, բայց դեռ չեն իրացրել բնակարանային հավաստագրերը»,-մանրամասնեց նախարարը:

Նրա խոսքով՝ բնակարանային ապահովման ուղղությամբ 2025 թվականի պետբյուջեի նախագծով նախատեսված է շուրջ 12 միլիարդ դրամ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 2 մարդ զոհվել է, 23-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԸՆԹԱՑԻԿ

«ՅՈՒՆԻԲԱՆԿՆ» ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՊԱՐՋԵՑՎԱԾ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Իրավաբանական անձինք եւ անհատ ձեռներեցները բիզնեսի զարգացման համար կարող են «Յունիբանկ»-ում ձեւակերպել պարզեցված ընթացակարգով մատչելի վարկեր: Պարզեցված վարկի շրջանակներում վարկային միջոցները տրամադրվում են առանց բիզնեսի ֆինանսատնտեսական վերլուծության:

Վարկը տրամադրվում է մինչեւ 120 ամիս ժամկետով՝ ՀՀ դրամով եւ ԱՄՆ դոլարով: Տոկոսադրույքն ակցիայի շրջանակում մինչեւ տարեվերջ կազմում է 10% տարեկան վարկը ԱՄՆ դոլարով ստանալու եւ 15% տարեկան՝ ՀՀ դրամով ստանալու դեպքում: Վարկային միջոցները կարելի է օգտագործել շրջանառու միջոցների համալրման, կապիտալ ներդրումների կամ առկա վարկերի վերաֆինանսավորման համար:

«Յունիբանկ»-ի վարկավորման պարզեցված ծրագիրը կոչված է հեշտացնելու Հայաստանում միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսավորման մատչելիությունը: «Պարզեցված» վարկը զգալիորեն արագացնում է անհրաժեշտ միջոցների ձեռքբերման գործընթացը եւ, համապատասխանաբար, թույլ է տալիս ձեռնարկատերերին ավելի արագ եւ արդյունավետ լուծել իրենց բիզնեսի ֆինանսական հարցերը: Հարմարավետ սպասարկումն ապահովելու համար «Յունիբանկ»-ը բիզնես հաճախորդներին առաջարկում է այցելել մասնագիտացված մասնաճյուղեր՝ «Բայրոն» (Երեւան, Բայրոնի 1), «Կենտրոն» (Երեւան, Կիեւյան 8, թիվ 63), «Կոմիտաս» (Կոմիտաս պող. 27, շենք 19), «Տաշիր Կենտրոն» (Երեւան, Խորենացի 33), «Մալաթիա» (Երեւան, Սեբաստիա 141): Բանկի մասնագետները կաջակցեն սպասարկման բոլոր փուլերում՝ հաշվի առնելով բիզնեսի առանձնահատկությունները եւ դրված նպատակները:

«Յունիբանկ»-ի բիզնես-հաճախորդները կարող են իրենց ֆինանսները կառավարել նաեւ օնլայն՝ օգտվելով իրավաբանական անձանց համար նախատեսված UNIBusiness մոբայլ հավելվածից: Հավելվածին մուտքի իրավունք ստանալու համար կարող եք դիմել «Յունիբանկ»-ի մասնաճյուղ:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

« ՄՈՒՍԱՀԱ» ՍՊԸ-ն մտադիր է դիմել ՀՀ հանրային ծառայությունը կարգավորող հանձնաժողով՝ ընկերությանը պատկանող «Ախուրյան» ՓՀԷԿ-2-ից (ՀՀ Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի Ջրաձոր բնակավայր) առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը՝ 23,476 դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ):

Հեռ. (+374 94) 91 57 52
Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ
շրջկենտրոն Ախուրյան
«ՄՈՒՍԱՀԱ» ՍՊԸ ՀՎՀ 05807577

ՊԵԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

ՊԵԿ-ը համալիր օդերաթիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում «Վանատամ» ՍՊԸ-ին առաջադրել է ավելի քան 5 մլն դրամի լրացուցիչ հարկային պարտավորություն, որն ամբողջությամբ վերականգնվել է Պետական եկամուտների կոմիտեն, հաշվի առնելով ՁԱՄ-ների հարցադրումները՝ «Լիանանա գարդեն հոլ»-ում («Վանատամ» ՍՊԸ) իրականացված հսկողական աշխատանքների վերաբերյալ, հայտնում է, որ ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օդերաթիվ հետախուզության վարչության աշխատակիցների կողմից «Վանատամ» ՍՊԸ-ի վերաբերյալ ստացված տեղեկությունների եւ միաժամանակ կատարված վերլուծական աշխատանքների արդյունքներով վեր հանված ռիսկերի հիման վրա, 19.10.2023թ.-ին ձեռնարկվել են համալիր օդերաթիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ «Լիանանա գարդեն հոլ» ֆիրմային անվամբ գործող ռեստորանային համալիրում առկա է շուրջ 100 մլն դրամի ստվերային շրջանառություն, միաժամանակ պարզվել է նաեւ, որ ռեստորանային համալիրն իր վարձու աշխատողներին վճարվող աշխատավարձի չափը 4 մլն դրամի չափով պակաս է արտացոլել եւ ներկայացրել հարկային մարմնին ներկայացվող հարկային հաշվարկներում:

Արձանագրված ստվերային շրջանառությունը հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումների նախազգուշացման եւ կանխման շրջանակներում ներկայացվել է հարկ վճարողին, որի արդյունքում վերջինս, ինքնակամ, 21.11.2023 թվականին հարկային մարմնին է ներկայացրել 2023 թվականի երկրորդ, երրորդ եռամսյակների շրջանառության հարկի եւ օգոստոս, սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսների եկամտային հարկի եւ սոցիալական վճարի ամսական ճշտված հաշվարկներ: Արդյունքում ընկերության իրացման շրջանառությունն ավելացել է 100.241.088 ՀՀ դրամի չափով եւ առաջացել է պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շրջանառության հարկի գումար՝ 4.009.644 ՀՀ դրամի չափով, իսկ եկամտային հարկի եւ սոցիալական վճարի ամսական ճշտված հաշվարկներով ընկերության վարձու աշխատողներին ուղղվող աշխատավարձի չափն ավելացել է 4.156.763 ՀՀ դրամի չափով, որի արդյունքում առաջացել է լրացուցիչ վճարման ենթակա 831.355 ՀՀ դրամ եկամտային հարկի եւ 170.081 ՀՀ դրամ սոցիալական վճարի գումարներ:

Միջոցառման արդյունքներով «Վանատամ» ՍՊԸ-ի մոտ ընդհանուր առմամբ առաջացել է 5.011.080 ՀՀ դրամի չափով լրացուցիչ հարկային պարտավորություն, որն ամբողջությամբ վերականգնվել է:

Տնտեսվարողի մոտ 30.12.2023 թ.-ին իրականացված հսկիչ գնման արդյունքում արձանագրվել է նաեւ հսկիչ դրամարկղային կանոնների կիրառության խախտում, որի արդյունքում հարկ վճարողին 31.01.2024 թվականին առաջադրվել է 769 335 ՀՀ դրամ տուգանք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի համաձայն:

Պետական եկամուտների կոմիտե

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, գյուղ Բյուրական, 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 10 հասցեում գտնվող 0,1226 հա հողամաս եւ 4,1 քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպ: Լոտի մեկնարկային գինը՝ 11800000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, գյուղ Բյուրական, 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 12 հասցեում գտնվող 0,111 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 10700000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, գյուղ Բյուրական, 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 14 հասցեում գտնվող 0,1075 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 10500000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, գյուղ Բյուրական, 2-րդ փողոց, 15 հասցեում գտնվող 0,1245 հա հողամաս եւ 5,34 քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպ: Լոտի մեկնարկային գինը՝ 12000000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, գյուղ Բյուրական, 2-րդ փողոց, 17 հասցեում գտնվող 0,1094 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 10600000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 22.11.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԵՋԱԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ «ԼԱԲԻՐԻՆԹ» ՕՊԵՐԱՆ

Հայաստանում կներկայացվի աշխարհում նախադեպը չունեցող «պաստիշո» ժանրի «Լաբիրինթ» օպերան: Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում նոյեմբերի 28-ին, 29-ին, 30-ին համաշխարհային պրեմիերա է: Միջազգային թիմի եւ տեղի պրոֆեսիոնալ մասնագետների ջանքերով կցուցադրվի օրիգինալ ներկայացում օպերային ժանրում՝ պոստմոդեռնիստական թատրոնի բոլորովին նոր ստեղծագործություն, որը լիովին նոր լիբրետոյի շնորհիվ մեկտեղում է Բախի, Մոցարտի, Ռոսինիի, Դոնիցետիի, Օֆենբախի, Գունոյի, Բիզեի, Չիլեայի, Շարպանտիեի, Սեն-Սանսի, Վերդիի, Կալմանի, Ջենկինսի եւ շատ այլ կոմպոզիտորների երաժշտությունը:

Լաբիրինթ. ամենեւին էլ պարտադիր չէ, որ այն կապված լինի հրեշ Մինոտավրոսի կամ հին եգիպտական տաճարների խճճված՝ ելքի որեւէ հույսից զուրկ ուղիների հետ: Ընդհակառակը, երբեմն դրա անցումներում թափառելը կարող է վերակառուցել գիտակցությունը: Հենց դա էլ պատահում է իր դրամատուրգիայով եւ կոմպոզիցիայով եզակի՝ «պաստիշո» ժանրի «Լաբիրինթ» օպերայի հերոսների հետ:

Օպերայի մտահղացման եւ սցենարի հեղինակն Օլեգ Թումանովն է, ով որոշել է մինչեւ եվրոպական բեմերում ներկայացման հայտնվելն այն առաջինը ցուցադրել իր պատմական հայրենիքում:

«Ինձ համար շատ կարեւոր է հատկապես Հայաստանում իրականացնել այս օպերայի բեմադրությունը: Հայտնի է, որ հայ հանդիսատեսը շատ լավ ճաշակ ունի, եւ շատ խստապահանջ է: Վստահ եմ, որ այս եզակի օպերան շատ կսիրվի հայ հանդիսատեսի շրջանում, հատկապես, որ մենք ներկայացնելու ենք վերջին 300 տարվա ընթացքում ստեղծված լավագույն օպերային արիաները»,-նշում է Օլեգ Թումանովը:

Նշենք նաեւ, որ հատուկ բեմադրության համար պատրաստվում են յուրահատուկ դեկորացիաներ եւ կոստյումներ, որոնք հանդիսատեսին կտեղափոխեն 17-րդ դար:

Օպերայի երաժշտական ղեկավարը եւ դիրիժորը Դմիտրի Վոլոսնիկովն է, դիրիժորը՝ Հարություն Արզումանյանը, խմբավարը՝ Նարինե Ոսկանյանը: Ռեժիսոր-խորեոգրաֆն է Իվան Ֆադեեւը, իսկ բեմադրող նկարիչը՝ Ելենա Սոլովյովան: Նախագծի ղեկավարն է Անի Եփրիկյանը:

«Լաբիրինթ»-ում ներգրավված է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը եւ երգչախումբը: Ելույթներով հանդես կգան աշխարհահռչակ Լա Սկալայի, Քովենթ գարդենի, Վերոնայի թատրոնի, Մետրոպոլիտեն օպերայի, ՌԴ Բոլշոյ եւ Մարիինյան թատրոնների օպերային երգիչները, որոնց թվում են բարիտոն Վասիլի Լադյուկը, տենոր Յարոսլավ Աբաիմովը, բարիտոն Արտյոմ Գարնովը, սոպրանոներ Քրիստինա Գոնցան, Մարիա Բույնոսովան եւ Քրիստինա Պոնոմարյովան, մեցցո սոպրանո Անաստասիա Լեպեշինսկայան:

Հ. Բ.

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 100

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԳՐՈՂԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկել է Պարույր Սեւակի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովը: Բացմանը ողջույնի խոսքով հանդես է եկել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:



Միջոցառմանը ներկա են եղել նաեւ բուհերի ռեկտորներ, գիտական, մշակութային համայնքի ներկայացուցիչներ:

Կարեւորելով Պարույր Սեւակի հոբելյանական միջոցառումների՝ պետական մակարդակով կազմակերպումը՝ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել Պարույր Սեւակի ծննդյան 100-ամյակի հոբելյանական հանձնաժողովի անդամներին, որոնց գործուն մասնակցության շնորհիվ ներկայացված 25 հայտերից ընտրվել է 9-ը՝ ձեւավորելով հոբելյանական ծրագիր ամբողջ տարվա համար: Հոբելյանական միջոցառումների շրջանակում Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նաեւ գիտաժողովների անցկացումը: Նրա խոսքով՝ ստացված մի քանի գիտաժողովների առաջարկները հանձնաժողովի քննարկումների արդյունքում որոշվել է միավորել՝ հնարավորություն ընձեռելով գիտական հանրույթի ներկայացուցիչներին լսելու ու քննարկելու մասնագիտական դիտարկումներն ու առաջարկները:

«Մեծանուն արվեստագետների եւ մտավորականների թողած գրական վաստակը ներկայացնելու եւ վերաժեւորելու ընթացքում որոշակի մտավախություններ են առաջանում կաղապարային մոտեցումներին տուրք տալու առումով: Այդ մտավախության ռիսկերի չեզոքացման կարեւոր նախապայմաններից մեկն այսպիսի գիտաժողովների կազմակերպումն է: Պարույր Սեւակն այն մտավորականներից է, որի թողած ժառանգությունն իրականում շատ բազմաշերտ է, եւ գիտաժողովը հնարավորություն է՝ վերլուծելու նրա գիտական եւ գրական գործունեության տարբեր բաղադրիչները:

Քննարկումները որակյալ աշխատանքի կարեւոր նախապայման են. հույս ունեմ՝ այս օրերի ընթացքում հնարավոր կլինի շատ մանրամասնորեն ու տարբեր շերտերով անդրադառնալ Պարույր Սեւակի ստեղծագործական ժառանգությանը: Կարեւոր է նաեւ, որ այս հարթակը միավորում է բոլորին, այդ թվում՝ Պարույր Սեւակի տուն-թանգարանին, ինչը կարող է նոր համագործակցությունների սկիզբ լինել»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

ԿԳՄՍ նախարարն անդրադարձել է նաեւ Պարույր Սեւակի հասարակագիտական, գրական-հրապարակախոսական ժառանգության ու թարգմանական գործունեության կարեւորությանը՝ դրանք դիտարկելով որպես միջգիտակարգային երկխոսության հնարավորություն եւ առանձին ուշադրության արժանի ուսումնասիրության նյութ:

Պարույր Սեւակի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի համակազմակերպիչներն են ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքը, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետը, Պարույր Սեւակի տուն-թանգարանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԱՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԸ՝ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Շախմատի՝ աշխարհի մինչեւ 18 տարեկան պատանիների եւ աղջիկների առաջնության 6-րդ խաղափուլում մինչեւ 18 տարեկանների խմբում առաջատարների շարքում է Հայաստանի ներկայացուցիչ Ալեքս Սահակյանը, ով 6 հնարավորից ունի 5 միավոր: Նույն տարիքային խմբում Արսեն Դավթյանը ունի 4 միավոր:

Մինչեւ 14 տարեկան աղջիկների խմբում առաջատարների շարքում է Սոնա Կրկյաշարյանը, ով ունի 4.5 միավոր:

Մինչեւ 14 տարեկան պատանիների խմբում Գոռ Ասկանազյանը ունի 3 միավոր: 7-րդ խաղափուլը կմեկնարկի նոյեմբերի 5-ին՝ Հայաստանի ժամանակով 22:00-ին:

ՌԵՔՍ ԿԱԼԱՄՅԱՆԸ ՉԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԸՆՏՐԱՆՈՒՆ

Հայաստանի բասկետբոլի հավաքականին առաջիկա խաղի համար կմարզի Գեորգի Ղազանչյանը:

Այս մասին հայտնում է Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան: Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ռեքս Կալամյանը NBA-ում ունեցած զբաղվածության պատճառով չի օգնի թիմին նոյեմբերի 24-ին կայանալիք Հայաստան - Ավստրիա խաղում: Հավաքականը հանդես կգա Գեորգի Ղազանչյանի գլխավորությամբ: Գեորգի Ղազանչյանը նաեւ Հայաստանի մինչեւ 20 տարեկանների հավաքականի գլխավոր մարզիչն է, որի հետ թիմը մասնակցել է 2024 թվականի Եվրոպայի B դիվիզիոնի առաջնությանը: Հայաստանի ազգային հավաքականը ուսումնամարզական հավաքը կսկսի նոյեմբերի 15-ից՝ պատրաստվելով հանդիպմանը:

ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ

Բազկամարտի աշխարհի չեմպիոն Ազատ Սրապյանին, միջազգային մրցահարթակներում տարած լուրջ հաղթանակների համար, ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից շնորհվել է Միջազգային կարգի սպորտի վարպետի կոչում:

Ինչպես տեղեկացնում են Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ազատ Սրապյանը ծնունդով Մարտունի համայնքի Վերին Գետաշեն գյուղից է Նա 10 անգամ նվաճել է Հայաստանի Հանրապետության բազկամարտի չեմպիոնի կոչումը 70 կիլոգրամ քաշային կարգում: Ազատ Սրապյանը 2024 թվականի օգոստոսի 15-ից 25-ը մասնակցել է Մոլդովայի մայրաքաղաք Քիշնեւում կայացած բազկամարտի առաջնությանը, որին մասնակցում էին աշխարհի 62 պետությունների ներկայացուցիչներ:

Օգոստոսի 25-ին նա աջ ձեռքով գրավել է 1-ին տեղը՝ դառնալով աշխարհի չեմպիոն, իսկ ձախ ձեռքով՝ բրոնզե մեդալակիր: Ազատը նաեւ Համահայկական խաղերի եռակի չեմպիոն է, Բալթիկայի գավաթի հաղթող, 2018 թվականի Սանկտ Պետերբուրգի մրցաշարի չեմպիոն, 2023-2024 թվականների Եվրոպայի փոխչեմպիոն:

● *Նոյեմբերի 12-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Կեսարի խրախճանքը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ւմ եւ ի՞նչ դայմաններում է տրամադրվում երկարամյա ծառայության կենսաթոշակը:

Սուսաննա Մելքոնյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է քաղաքացիական ավիացիայի՝

թռիչքաիրամանատարական, թռիչքաիրահանգչական եւ թռիչքային անձնակազմերի անդամներին, բորտօպերատորներին եւ բորտուղեկցորդներին, եթե լրացել է նրանց 45 տարին, եւ նրանք աշխատել են առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 20 տարին երկարամյա ծառայության ստաժ է, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատվելու դեպքում, եթե նրանք աշխատել են առնվազն 20 օրացուցային տարի, որից առնվազն 15 տարին երկարամյա ծառայության ստաժ է,

օդային երթեւեկության կառավարման ծառայության կարգավարի (դիսպետչերի) վկայական ունեցող աշխատողին, եթե լրացել է նրա 50 տարին, եւ նա աշխատել է առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 15 օրացուցային տարին անմիջականորեն կատարել է օդային երթեւեկության կառավարման աշխատանք, իսկ առողջական վիճակի պատճառով օդային երթեւեկության անմիջական կառավարման աշխատանքից ազատված անձին, եթե լրացել է նրա 50 տարին, եւ նա ծառայել է առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 10 օրացուցային տարին անմիջականորեն կատարել է օդային երթեւեկության կառավարման աշխատանք,

ինժեներատեխնիկական ծառայության աշխատողին, եթե լրացել է նրա 55 տարին, եւ նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 20 օրացուցային տարին կատարել է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մասնակի կենսաթոշակ նշանակելու համար անձը կարող է դիմել դրա իրավունքը ձեռք բերելուց հետո՝ ցանկացած ժամանակ, մինչեւ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքի լրանալը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք, թե ո՞r ուսանողներին է կրթաթոշակ տրվում:

Լուսինե Հարությունյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է, որը մրցութային կարգով տրվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողին՝ գերազանց եւ լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսեւորելու համար, ինչպես նաեւ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին:

Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում՝

1) մասնակցությունն ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին.

2) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսագրերում եւ զանգվածային լրատվության միջոցներում).

3) մասնակցությունը միջքոլեջային, քաղաքային, հանրապետական եւ միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին.

4) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում պետական կրթաթոշակը տրվում է ուսանողական նպաստի համակարգում ընդունված ուսանողին: Պետության կողմից կրթաթոշակ տրվում է ՀՀ պետբյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին:

ՀՀ կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված եւ ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող 1-ին կուրսի ուսանողներին, ըստ սահմանված չափերի, համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում՝ տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի մասնակի փոխհատուցում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Բազկամարտի աշխարհի չեմպիոն Ազատ Սրապյանին, միջազգային մրցահարթակներում տարած լուրջ հաղթանակների համար, ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից շնորհվել է Միջազգային կարգի սպորտի վարպետի կոչում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*